

ՏԵՐ ԵՒ ՏՆՈՐԷՆ

Ե. ԹՈՐՈՍՏԻԱՆ

Նամակ կամ որևէ

գրութիւն պէտք է ուղղել առ

Տնօրին ԱՐՇԱԼՈՅՍ լրագրի


ԳԱԶԻՐԷ (Եգիպտոս)

E. TOROSSIAN

Dirac. propr. du journal arménien

ARCHALOUYCE

LE CAIRE (EGYPTE)



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՆԱԲԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲՍԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԿԵՆՑ ԲՈՒ ՉՈՐԱՐ	
Տարեկան ուղղ. գումար	60
Վեցամսեայ	35
ՕՏԱՐ ԵՐԿՐՈՐԷՐ	
Տարեկան	20
Վեցամսեայ	12

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՆԵՆԻԿ ԵՒ ԹՊՅՈՒՆԱՐԻ ԺԱՄՔԸ ԽՈՐԱԳՐՈՒՅԵԱՆ ՎՐԱՅ Ի՛

ԽՈՐԱԳՐՈՒՅԵԱՆ ՈՂՊՈՒՄԱԾ ԳՐՈՒՅԻՆԻՖ ԵՍ ԸՆՏՐՈՒՐ

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆԻՔ ԿՈՆԻՍՏԱՆԿ ՎՃԱՐԵԼԻ ԵՆ

ԱԶԳ

—*—

«Արշալոյս» ցրութիւն մը պէտք ունի, փափաքողները թող դիմեն թերթիս Տնօրինութեան :

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԵՐՔՈՒՄ

ՇԷԹԻ ԷԹՄԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԱԼՈՒԱՅԻՆ

ԱՌԹԻԻ

—*—

(Շարունակութիւն 174 թիւէն)

«Վարչութեան Գաղաք. Ժողովը, որ մեր նախագահութեան տակ (1) կը գումարուէր այն ատեն, անմիջապէս խնդիրը օրէնսդէպտարտու յանձնարարութեան ներկայացուցած և անոնց կարծիքին համեմատ, նկատելով թէ՛ նոր վարձակալին ըսածին նայելով՝ եթէ փաստին հեղինակը նախորդ օտարախոսակ վարձակալն է, բնիկ դատարանէն արձակուելիք վճիռ մը չի կրնար այս վերջնոյն դէմ գործադրուել ևն »:

Մեր նախորդ թուով ըսինք արդէն թէ՛ Առաջնորդարանը և իր քուլիսներուն մէջ ըսին զբաժ և ինքզինքնին մէկուն կամ միւսին պաշտպանութեանը յանձնած—բնականաբար պնակալէցութեան ստորնութիւնը յաջողապէս գործադրած ըլլալուն համար—փաստակար ասորբերը, գիտէին թէ՛ ճէյն էթմանի կալուածին մէջէն շատ մը բաներ պակաս էին, ինչո՞ւ պէտք եղած տեղերը չ'յուշեցին՝ եթէ հարկ էր որ լուրջ ուշադրութիւն մը գարձուի նախորդ օտարախոսակ վարձակալէն կալուածի վերստացման պահուն բաղդատութիւնը ուշի ուշով կատարուելու և պակասները այն ատեն ուղղակի պահանջուելու համար :

Հոս յայտնի կերեւայ թէ՛ առաջնորդարանի շահախնդիր ստորնութիւնը անուղղակի շահու մը զոհած են իրենց խիղճն ու աշնի պարտականութիւնը, — եթէ երբէք այդ բանը գոյութիւն կրնայ ունենալ պնակալէն իր յանձնարարութեանը գոյեցել կողմէն, բայց ոչ ստամբարանի կողմէն : Ո՞րքա՞նք իրենց համար ստամբարանի կողմէն իրենց յանձնարարութեանը գոյեցել կողմէն : Ո՞րքա՞նք իրենց համար ստամբարանի կողմէն իրենց յանձնարարութեանը գոյեցել կողմէն :

(1) Բիզանդիոնի ընթերցողները պիտի կարծեն թէ՛ իրաւունքն նախագահ ըլլալու արժանի է այդ տողերը ստորագրողը : Եթէ գիտնային որ Գէորգ Եպիսկոպոս Իւթիւճեան ըսած է այդ օրինակի նախագահին համար թէ՛ Պալըզըն մեռել թաղել է և զերեզման օրհնել է զառ ուրիշ բանի յարմար չէ, այն ատեն հոգ չէր :

Մ . Ն .

կալէցներու խմբակին մէջ — և թոյլ տուած են որ ազգին շահերը չփոթութեան մէջ գլորին և այդպէսով ապագային իրենք օր և է պատասխանատուութենէ զերծ կարենան մնալ :

Վերջիցեալ հատուածին մէջ որոշ կերպով կը տեսնուի մեր ըսածներուն անտրտեսելի հաստատութիւնը, որ ահաւասիկ . «Նրկատելով թէ՛ նոր վարձակալին ըսածին նայելով՝ եթէ փաստին հեղինակը նախորդ վարձակալն է ևն »:

Այսպիսի գրութեան մը հեղինակները արդեօք չեն կարմիր՝ քիչ մը գոնէ, երբ իրենց (այսինքն ազգին) կալուածին համար անամօթաբար կ'ըսեն նոր վարձակալին ըսածին նայելով, փոխանակ ըսելու, մեր կատարած հետազոտութեանց ստույգ արդիւնքի նայելով :

Մենք կրնանք հաւատալ թէ՛ կը գտնուին այնպիսի մարդիկ՝ որ կրնան իրենց սեփական տուններուն համար այսպէս ըսել . «մեր Ղուկիանոս բարեկամին ըսածին նայելով՝ երեկ չէ առջի օրը, ծանոթիկներ իր քրոջ, մօրաքրոջ և անոր սիրունիկ դստերաց հետ շատ փառաւոր հացկերոյթ մը տուած է քաղաքիս ծանօթ ու անծանօթ երեւելեաց . թէ՛ հացկերոյթէն վերջ ինձի տալի խումբ մը ընտիր կտորներ նուագած է, որոյ մեկտորները գինիի առատութեան միացած, հանդիսականները հեշտագրգիտ զգլխումի մը մատնած են . թէ՛ ուրիշ պանծախի խումբ մ'ալ՝ վարսի, ֆաւրիչի, քոյրայի և քա—սը—գաւրի սքանչելի եղանակներ նուագած է, որոյ միջոցին, գինւոյ ազդեցութեան տակ յղիացած զոյգեր, յաւերժահարսեան թուիչքներ կատարած են . . . »:

Անցնինք այս կէտն ալ և շարունակենք կարգաւ առաջնորդարանի բացատրութիւնը՝ որ կ'ըսէ .

«Հետեւեալ խառն դատարանի ստիպողական դործոց դատարանին առջև Առաջնորդարանի վարձեալ փաստաբանին ձեռքով դատ բացած է 1900 Մարտ 14 ին ճիւն և նոր վարձակալներուն դէմ միանգամայն, քանի որ փաստին, եթէ իրօք գոյութիւն ունի, հեղինակն ու պատասխանատուն մէկը կամ միւսն է անպատճառ, և քանի որ ըստ սովորութեան, որուն առաջնորդարանը կ'հետեւի, իրեն առաջին կալուածն ունենալէն ի վեր, էպատիլէն իր պարունակութեամբ հին վարձակալէն նորին փոխանցուած է ուղղակի »:

Այս հատուածին վերջին մասովը Առաջ-

նորդարանը իր յանձնարարութեանը գոյեցել կողմէ, բայց ոչ ոք կրնայ խոստովանել թէ՛ սատամբարանական կրնայ համարուել : Ո՞րն է այն կալուածատէրը որ իրեն համար սովորութիւն ընդունի՝ երբէք իր կալուածին քովը չ'մտնեալ, զայն այլքէ չ'անցնել . չ'խնամել . չ'հոգալ . հինցածները չ'նորոգել . իւր ստացուածքին մէջ բաներ աւելցնել կամ պակսեցնել . անոր հասոյթները կրկնապատկելու և բազմապատկելու համար միջոցներ ձեռք չ'առնել :

Առաջնորդարանը՝ վերջիցեալ յայտարարութեան վերջին մասով՝ այսինքն իր առաջին կալուածն ունենալէն ի վեր ըստ սովորութեան պարբերութեամբ, կը հարկադրէ մեզ ըսել թէ՛ բնաւ խնամով չ'վերաբերուիր ազգային կալուածներուն հետ . և այն՝ միմիայն իր ընկալեալ սովորութիւնը յարգելու համար : Բայց ինչո՞ւ քիչ մը վերջ կը յայտարարէր թէ՛ մարտ 14 ին ճիւն և նոր վարձակալներուն դէմ դատ բացած է . ըսել է իր իրաւունքները պաշտպանել գիտնալու պարտաւորութիւնը զգացած է՝ միայն թէ՛ այն ատեն, երբ արդէն արեգակը մայր մտած, և փնասը իր բոլոր ահագնութեամբ դռնէն ներս խուժած է . ինչո՞ւ կ'ըսենք, առաջնորդարանը աւելի կանուխ դատ բանալու վրայ մտածած չէ, քրնանելով իր կալուածին գոյեցելը, և փոխանակ իրեն դէմ մէկ հակառակորդ ունենալու՝ յանձին նախորդ վարձակալին, այսօր երկուքի դէմ մարտնչելու դատապարտած ինքզինքն, նոր վարձակալն ալ իրեն դէմ ունենալով . մանաւանդ թէ՛ այժմ այդ երկուքը «գո՛ւն ըրիր, ե՛ս ըրի» չ'փոթութեան մէջ պիտի թողուն խնդիրը, որով որոշ արդիւնք մը կարելի չ'պիտի ըլլայ ձեռք բերել . . . »:

Իսկ այս ամեն խառնաշփոթութեանց մէջ ինչ որ պարզ օրուան արեգակի նման փայլուն լոյսով մը մեզ կը ներկայանայ, այն է թէ՛ առաջնորդարանը կրնայ Մամբրէ քահանայի մը միջոցաւ հրապարակաւ յայտարարել այն ընկալեալ սովորութիւնները, որ թէ՛ ակներկ կերպով փաստակար են, բայց «ընկալեալ սովորութիւն» ըլլալուն համար պէտք է տալու իր այդ փաստներու ծովուն մէջ :

Ահա թէ ինչ կ'ըսնակաւ կը մտածեն մարդիկ ՉՈՐԸ . լուստուրեալ կողմած դատուն մէջ . . . »

ԵՂԻՇԷ

(Շարունակելի)

ՆԱՍԱԿ ԳԱՅԻՐԷԷՆ

«ԲԺՅԻՇԿ՝ ԲԺՇԿԵԱՒ ԶԱՆԶՆ ԻՈ»

«Նոր Օր» ի 84 թուին մէջ «Առիթըր գանձ մ'է» խորագրոյն ներքեւ խմբագրական մը կարգացի, յորում յօդուածագիրը գոհիկ լիզուով մը կը քննադատէր մէկէ աւելի հանրածանօթ եւ պատուաւոր ազգայիններ, իրեն անքաղաքավար, եւ այս, մի միայն վերջերս «գիշերային գասարանի մը հիմնարկութեան ի նպատակ «Նոր Օր» ի վարչութեան (եթէ կայ) կազմակերպած լարախաղացութեան» անթիւ թիկնաթոռի տոմս մը մերժած ըլլալուն, եւ ժամանակին որբախընամ ընկերութեան մը գիւտնէն կախում ունեցող Ատենապետի մը գէպի «Նոր Օրի» խմբագիրը անպատշաճ կերպով վերաբերուելուն համար:

Տխար խմբագիրը, իրեն կենցաղագէտ մարդ, երբէք իրուունք չունի ապանելու, եւ այնքան ալ կոչու կերպով, որեւէ մէկը, որ «Նոր Օր» ի բարեպատեհ երեւումը թէեւ շնորհաւորած է եւ սակայն քիչ ատենէն յուսախափ եղած է անոր բռնած ուղղութիւնէն:

Ամեն ոք կը յիշէ տակաւին թէ ինչ աղտոտ, վայրահալ յօդուածներու ժառանգ ընդունարան մը եղաւ Նոր Օր, իր երեւումէն հաղիւ մի քանի օր վերջ եւ թէ ինչպէ՛ս Տ. Ս. Փափագեան՝ եղած արդարացի բողոքանաց դէմ կարգաբացներ զայս, ոգով չտի պաշտպանելով, այն ատեն, այդ աղտոտութեանց հեղինակը՝ զոր, քիչ յետոյ գետնէ գետին պիտի տապալուէր:

Իցի՛ւ թէ, այս կամ այն անձին դէմ ունեցած իր կիրքերը գոհացնելու այս տեսակ «գանձ-առիթներ» փնտաելու տեղ, Տ. Ս. Փափագեան, օր մ'ալ, առիթը գտնէր քննելու իր արարքները եւ տեսնելու թէ մանանխոյ հասի չափ ունի՞ միթէ այն քաղաքավարութիւնէն՝ զոր իրմէ դատ ամենէն կը պահանջէ:

Պարզ պատմութիւն մը ընեմ եւ թող Պատ. ընթերցողը գտնեն եւ վճիռը տան:

Ասկէ վեց ամիս առաջ ամուսնութեանս առթիւ, մինչեւ ամենէն մօտ եւ հեռաւոր բարեկամներու ու ծանօթներու հրաւիրազրկեր զրկած ատենս, պարաք համարեցի նաեւ, ինձ պաշտօնակից համարուող երկու թերթերու «Արշալոյսի» եւ «Նոր Օրի» Տնօրէններուն ալ մէկ մէկ հրաւիրագիր զրկել: Ատոնցմէ առաջինը, կարի

շնորհակալ եմ իրեն, շատ եւ շատ պատշաճութեամբ վերաբերուեցաւ ինձ աչք առթիւ:

Գալով Նոր Օր ի տնօրէնին որ այսօր ելեր եւ քաղաքավարութեան դասեր կուսայ մեզ, փոխանակ հարսնիքիս գալու կամ քաղաքով մը շնորհաւորելու գիտ կամ գէթ բոլորովին լուռ մնալու, կեղծ եւ խուսմբ մը բարեկամներու առջեւ խայտառակ խօսքերով կը յայտարարէ թէ «refuse» պիտի ընէ հրաւիրագիրս: Եւ թէեւ սոյն բարեկամներս շատ կաշխատին համոզելու գինքը որ ետ կենայ այդ գաղափարէն, ատի ամենատարրական քողաքավարութիւնէ զուրկ եղող վայրենիի մը չընելիք մէկ բանն ըլլալը նկատել տալով իրեն, զարձակ մեր ուսեալ, օրէնսդէտ, բանագէտ ու բարոյախօս անձնաւորութիւնը, հրաւիրագրոյս պահարանին վրայ «refuse» գրուած փոստային կը յանձնէ եւ իմ հասցէին կը վերադարձնէ:

Ընթերցողը թերեւս արդարացուցիչ պարագայ մը փնտռեն իր այս արարքին մէջ: Տխար Փափագեան ո՛չ միայն մէկ, այլ երկու ունի: Նախ որ Նոր Օրի բաժանորդութիւնէս դադրած էի, իմ եւ այն ատենի պաշտօնակիցներուս մասին լղբձուկ նախատինքներ հրատարակած ըլլալուն համար եւ երկրորդ որ հարսնեկան հրաւիրագրերս Նոր Օրի տպարանը չի տպուեցան: Ես մինչեւ մէկ աստիճան անպատասխանատու նկատելով զՏխար Փափագեան Նոր Օրի իր առաջարկութեան ուղղութիւնէն չհեղձուի, ու յետոյ բարեկամութիւն եւ սկզբունք ու շահ ասրբեր բաներ նկատելով եւ որ աւելին է, աներձագիտ՝ Տխար Գառնիկ Թումանեանի փափաքանաց ալ գոհացում տալու համար հրաւիրեցի զՏխար Փափագեան: Բայց երթագրերը որ ես Նոր Օրը մերժած ըլլալուս համար Տ. Փափագեան իրաւունք ունենար տրպազ վարուելու հետս, սակայն ամեն ոք գիտէ թէ շարտանական հրաւիրք երկուստեք, հարսնի եւ փեսայի մեծերուն կողմանէ կը զրկուին:

Արդ՝ իմ կողմէն մայրս կը հրաւիրէր, իսկ հարսին կողմէն իր եղբայրը՝ որն որ ունէ իրենդէր չ'ունէր Տ. Ս. Փափագեանի հետ եւ Նոր Օրի տարեկան բաժանորդագիրն ալ վճարած էր:

Տխար Փափագեան որքա՞ն կիրքէն կուրացած ըլլալու էր որ չի՛ տեսնելով այս ամենը, եւ կամ որքան անկիրթ եղած ըլլալու էր որ տեսնելով այս ամենը «refuse» հրաւիրք փոխանակ մօրս կամ աներձագիտ հասցէին՝ ուղղակի իմ հասցէին վերադարձուց:

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՀԱՅԳԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ ՏԵՍԱՐԱՆՆԵՐ (2)

ԵՐԵՎԱՆԻ ԹՐ

ԿԱՄ

ՊԱԽԱԼ ՍԱՐԳԻՍԻՆ ԱՆՈՒՆԸ

Շարձ. Լախոտի իրեն

Բազմոցին քովը, գետինը, հասա ու լայն միմեկը մը. Տանտիկնոջ տեղն է այս, որ շատ գէր ըլլալուն սովոր է հոն փռել իր մեծածաւալ մարմնոյն բազմամատուր ու բազմածալ թափթեփածութիւնը. Ուրիշ միմեկը մը երբիս առջեւ, որովհետեւ հոն է նաեւ աւանդական երկր, իր անկողիններու, վերմակներու, բարձրուպատկաների դէզովը զոր այնքան արուեստագիտօրէն յարդարել գիտեն հայ կիներն ու աղջիկները: Դրան քով պահարան մը. պատերուն վրայ գէմ գէմ մէկ մէկ հիւնախոյ, մէկուն մէջ տանտիրոջ փեմը, կաս կարմիր, քովը ճրագակալ մը, նորահաստատ մոմով. միւսին մէջ Ատուածաշունչ մը մաշած կափարիչով, պախալ Սարգիսի մօրմէն միացած բարեպաշտ յիշատակ: Սենեակին մէջտեղը կարմրագոյն պղնձէ ցած կրակարան մը որ արտասովոր փայլով կը փայլի. շրջանակին մէջ ունեղին մոտցուած չէ: Փառաւոր կրակ մը կը վռտի, «էլլէմէ քէմիւրի» է

ըլլածեւ կառուցուած կարմիր շէնք՝ մը որ կ'այրի մեծաշող, ու բարի տաքութեամբ մը կը լեցնէ սենեակը: Պատին առջեւ ճերմակ ծածկոցով պարզուկ սեղան մը. վրան անխուսափելի ջրի շիշը, ուսուցիկ, լայնշի փորով եւ սագի նեղ ճիտով. քովը երկու անոտն խոշոր գաւաթներ, մեծ ծարաւներու համար: Գաւաթները եւ շիշը զրուած են քրդախոսքով բանուած մաքաղաթէ ըտրորակներու վրայ. լուցիկի տուփ մը, մոխրամաններ ու պարզուկ կանթեղ մը, առանց լուսամտի: Տնեցիներուն աչքերը զօրուոր են, փառք Աստուծոյ:

Կահաւորութիւն մասին՝ այսչափ միայն: Միթէ՛ ասիկայ չի՞ բաւեր նահապետական ասն մը որպիսին է Պախալ Սարգիսինը: Չէ՛ սակայն, կարեւորը մտոցայ, ներդրութիւն: Գետինը, գորգի տեղ. . . մաքրութիւն. պատերուն, բազմոցին վրայ, ամէն կողմ, իբր զլիսաւոր զարդ, իբր միակ պերճանք. . . մաքրութիւն, միայն մաքրութիւն, զուտ մաքրութիւն, մաքրութիւն լո՛ւկ, մե՛րկ:

Ով հայկական մաքրութիւն, քանի որ տեղն է, քանի որ ճամբուս վրայ կը գտնուիս, թո՛ղ որ ողջունեմ զքեզ յարգանք, յուզումք եւ հիացումով: Թո՛ղ տուր որ փառաբանեմ գիւցազներգիւմ զքեզ՝ քեզի արժանաւայել լեզուով, ի՛նչ պայծառութիւն եւ զուտ, ի՛նչ լոյս եւ ի՛նչ զուարթութիւն հայ տուններուն, հայ սենեակներուն: Վեզմով, միայն քեզմով կը ցնծան ու կը ցոլան անոնք, կը հպուրին կը «սըղուին», կը տօնաւորուին: Հայ տանտիրոջ հրաշքն եւ զուտ, անոր գլուխ՝ գործոցը, մեծագոյն գրաւորումն եւ առաքինութիւնը: Անոր ճակատին

Ո՛չ, պարոն խմբագիր, քարոզի՛չ, բարոյախօս, ո՛չ, չենք կըլլեր ձեր ուսուցիկ եւ անխուսա քարոզութիւնները ու շուտով կը տեսնենք ձեր ամեն քննադատական գրուածոց մէջ այս կամ այն անձին դէմ (չհոռու համար եւ ո՛չ թէ սկզբունքի համար) անձնական կիրքերնիդ գոհացնելու մարմաջնիդ: Ո՛չ, պարոն, անանկ խմբագրութիւն, ատանկ ժողովուրդի առաջնորդութիւն չըլլար:

Մտքէս անգամ չ'էի անցնել թէ օր մը այս խօսքերը պիտի ուղղեմ ձեզ, բայց «առիթըր գանձ մ'է» ըսած էիք. գուր ինձ տուիք առիթը. չ'եմ փախցնել զայն ու ես ալ զձեզ կամարակեմ նոյն իսկ ձեր խարագանովն, եւ կ'ըսեմ. «Բժիշկ բժշկեա՛ նախ զանձն քո»:

Գառնիկ 3 Մայիս 1901

Խ Ա Ռ Ն Լ Ո Ւ Ր Ե Ր

ԹՊԱՆՍՎԱԼ

ՏԸ-ՈՒԷԹ. — Բարիս քաղաքը գրաւուելէն քանի մը օր առաջ, սակաւաթիւ պօէրներու հետ հոն գտնուած է ՏԸ-ՈՒԷԹ, երաւականացած է միայն անգլիաւոց դէմ բուցաշունչ ճառ մը արձանատիւ լով. անտի վիլլիտտօրը մեկնած է Վօլվը՞օքի երկաթ թուղոյ ճամբէն անցնելով:

— Վիկենայէն կը հեռագրեն Անգլիական աղբիւրներէ առնելով թէ՛ հայտութեան նոր առաջարկներ եղած են Լորտ Գիչնէրի, բայց կը կարծուի թէ՛ ատոնք ժամանակ վատակելու համար եղած են:

— ԱՐՄԻ ԷՆՏ ՆԱՎԻ ԿԱՂԻԹԻ Ապրիլ 13 ի թուոյն մէջ՝ Անգլիացոց Մարտամնոյ մէջ ունեցած կարուստներուն ցուցակը հրատարակուած է, որուն նայելով թշնամիէն սպաննուած, վէրքերէ, հիւանդութիւնէ եւ պատահական մահով մեռած, գերի բռնուած եւ պակասած, ծառայելու իբր անկարող Անգլիա զրկուածներուն գումարը կը հասնի 158 սպայի եւ 4573 զօրքի:

Քրտինքն եւ զուտ, եւ իր ձեռքերուն ու ոտքերուն արիւնը. միշտ հակող ճակատ, միշտ չիող, սրբող, ալող ու լուսացող, միշտ սկզբնաւոր դիւցազնական ձեռքեր ու ոտքեր, Փառաւոր կացի՛ք, հայ տանտիրիկն եւ հայ աղջիկ որ ատնի այս երեւոյթը հազուցեր էք պախալ Սարգիսին ասնը, որ այսքան ճերմակ էք ըրեր կուսները, տախտակները, այսքան անարատ, որ սա չ'ըլլալիք փայլը տուեր էք պղնձէ կրակարանին, ապակիներուն, մետաղներուն:

— Չա՛ր, չա՛ր:

— Գա՛. դուռն է դո՛ւրը, ըրա Տանտիկինը, որուն գլխագիր, ասկիդիս Տ մը շեռակը կը վայլէ: Գէր բազր ուսած ու կարճատև մարմնով եւ երկու կողմը տատանող քալուածքով խաթուն մըն էր Հոսօի Հանրմը, որուն նման շատեր կան մեր ժողովրդին մէջ: Գա՛ վաղ մեղաշոյլ խօսողներէն էր: Սարգիս Ազան ետին գարձաւ ու քառակուսի փոքր պատուանի մը քովն ի վար կախուած չուանք քաչեց. մինչ իր աղջիկը, 16 ասրական գիտուկ ու գրեթէ կնկան ձեւ ու գարձաւածք ունեցող խոշոր աղջիկ մը, եւ իր երկու թոմպուրիկ մանչերը եւ իր տաք տարեկան աղջնակը՝ գիտ պտիկ տղայ մըն ալ քովի սենեակը կը քնանար. Աստուծոյ տուածէն զաւակ շատ ունէր պախալ Սարգիս. . . — անաղուղն ի վար կ'իջնային շուտափոյթ՝ դիմաւորելու եկողները:

Տանտիկինը մինչեւ սենեակին դուռը գնաց եւ հոն կեցաւ սպանդական. իսկ Տանտէրը որուն շնորհակցութիւնը, «սամուռ քեւրք» ին եւ փորթն արժանապատուութեանը չ'էր վայլէր բնաւ որ իր զաւակներուն պէս վազն ի վազ կամ իր

Բնականաբար այս թիւերը իրականութեան նուազ են, և սակայն ցոյց կուտան թէ Անդրկասպիկները որ աստիճան կորուստներ կը կրեն:

ԹՈՒՐԻՍ ԵՒ ՉԻՆԱՍՏԱՆ

ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ ԽՐԸ. — Կ. Պօլսէն Մայիս 2 թուականաւ կը հեռագրուի թէ Էնզէր փաշայի հրամանատարութեան տակ Չինաստան մեկնած է Օսմանեան պատուիրակութիւն մը, որ կը բաղկանայ շատ մը սպաներէ և մահմետական կրօնաւորներէ:

Պատուիրակութիւնը Չինաստանի իսլամներու հետ յարաբերութեան պիտի մտնէ:

Ռուսիան շատ հակառակած է այդ առաքման, սակայն Գերմանիա հաշտ աչքով կը նայի այս պատուիրակութեան, նկատելով որ իրեն համար շատ նպաստաւոր կըլլայ այն:

ՊԱՐՍՅԱՍՏԱՆ

ՊԱՐՍՅ ՇԱՀԸ. — Ս. Բէթէրպուրիէն կազէք ըր գոյննի հետեւեալը կը գրեն. «Շահին հիւանդութիւնը կրկին ծանրացած է. լեարդի և երեկամունքի բորբոքումը ու դժուարաշնչութիւնը (dispnée) ծանրացած են:»

«Մեծ Վէզիր Ասքար խանի և Հաքիմ-էլ-մուլա Մահմուտ խանի միջև կռիւը կը շարունակուի:

«ԱՍԼԱՆ» ՓՈՒԱԴՐԱՆԱՒՈՒՆ ԸՆԿՂՄԻԸ

«Ասլան» նաւուն մէջ 2500 զինուոր կար Սիրիայէն եկող, որոնք եճմէն պիտի երթային, ուր վերջին լուրերուն նայելով, համբաւաւոր Շէյխ Համիտ-էտ-Տին ապրտամբած է թուրք իշխանութեանց դէմ: Սուէզէն 300 ուխտաւորներ ալ, որք Մէքքէ պիտի երթային նաւ նստան մինչև Եամպօ երթալու համար: Նաւը Եամպօի մօտերը երբոր ժայռերուն վրայ նստաւ, նաւապետը նաւուն ծխարանին մէջ նստած էր:

Կնկան պէս յոտնկայս դիմաւորէ, սանկ քիչ մը երերակաց, «չիպուխ» ը քովը դրաւ բարձին վրայ, և ինքզինքը շտկելով ժողովակով սպասեց:

— Լոյս բռնեցէ՛ք, լո՛յս, հրամայեց ներսէն. Աւելորդ խօսք: Լոյսը շատոնց բռնուած էր արդէն. կեանքին մէջ աւելորդ խօսքերը յաճախ էն կարեւորներն են, որ զրական տեսակէտով անօգուտ և ծիծաղելի, անոնք գոհացում կուտան բարոյական կամ մտաւորական պէտքերու, որոնց փոքրագոյնը չ'է խօսելու, բան մը ըսելու պէտքը, ինչ որ ալ ըլլայ այդ բանը: Պախալ Սարգսիւն «լոյս բռնեցէ՛ք» ը, թէեւ աւելորդ ու ծիծաղելի յոյս բռնուելուն տեսակէտով, շատ լուրջ ու կարեւոր խօսք մըն էր իր տանտիրութիւնը ամէն առթիւ յայտնելու յայտարարելու հօր պէտքին տեսակէտով և օգտակար անոր: Ասոր համար է որ աւելորդ խօսք կամ շարժում պիտի բնաւ գոյութիւն չ'ունին:

Վարը գրան թով ձայներ սկսած էին կամաց կամաց վեր ելլելու վրայ: Նայիս պահ մը վերջը զբան սեմին վրայ իր բարձր և ուղղաձիգ հասակը տնկելով ձեղունէն սկսեալ մինչ ցտախտակամած, — ըսի՛ թէ ձեղունը ցած էր, — երեւցաւ բանջարավաճառ «Գիրգորը», իր ետին ձգած կիներ և երկու «հասուկ» աղջիկները: Ահագին յորդաբուրդի պիտի ունէր այս մարդը, որ իր դէմքին երկու քովերէն կ'երկնայային մէկը դէպ ի հարաւ միւսը դէպ ի հիւսիս, և իր ոսկրուտ, փոսերով և ցցուածքներով կրեւէջաւոր դէմքին ծիծաղաշարժօրէն անաւոր երեւոյթ մը կուտայային. շատ անուշ, շատ կակուղ մարդ մը, հակառակ այս պիտիներուն, որոնցմէ տղաքը միայն կը վարնային «ալպուճուկ» ի նման:

մը տիրեց նաւուն մէջ: Բաղխումէն մէկ քանի զինուորներ ծովը թափուեցան. շատեր խեղդուեցան, և շատերուն ոտքերը և ձեռքերը կտրուեցան բուստի խարակներուն վրայ իյնալով:

Նաւապետը տեսնելով որ նաւը կորսուած էր, որոշեց զայն թողուլ և նաւակներով ծովեզերք հասնիլ: Ռէվօլվէրը քաշեց, նաւաստիներն ալ ինչ որ գտան անով զինուեցան, դանակով, ուղիւղէրով ևն. և մէկ քանի նաւակներու մէջ մտան ու հեռացան: Զուրին մէջ գտնուող զինուորներէն մին, որ նաւակներէն մէկուն մէջ ցատկած էր, դաշտնով խողխողուեցաւ և գիակը ծովը նետուեցաւ:

Ճամբորդները երբ որ տեսան թէ նաւապետը և նաւակները նաւը ձգելով հեռացան, անկարագրելի սարսափ մը տիրեց: Շատերը ծովը նետուեցան և խեղդուեցան, մինչդեռ ուրիշները խենդերու պէս կը գալարուէին, հագուստին հանելով և ծովը նետուելով: Բազմաթիւ զօրքեր մէկ քանի ժամ մինչև վիզերին ջուրերուն մէջ մընացին:

Խեղճ նաւաբեկեալները 48 ժամ նաւուն վրայ մնացին, մինչև որ Եամպօն զրկուած փոքրիկ նաւակներու վրայ տեղաւորուեցան. փոխադրութիւնը երկու օր տևեց. բոլոր զինուորները իրենց զէնքերը, ռազմամթերքները և աղխերը կորսնցուցին:

Վերջապէս Մահրուսէի ընկերութեան երեք շոգեխաններ արկածին վայրը հասան և սկսան «Սալան» ը քաշել. բայց հազիւ թէ նաւուն կողը ժայռերուն վրայէն երերաց, անմիջապէս ընկղմեցաւ:

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

— Կ. Պօլսոյ մէջ ժամտախտի դէպք մը հեռագիրը ծանուցած ըլլալով, առողջապահական վարչութիւնը որոշած է որ Պօլսէն եկողներն, ց'որ տնօրինութիւն,

նութիւններ գտնալով թերեւս հոն: Երկայն ճիւղ մը ունէր, խոշոր ձեռքեր և ոտքեր: Տիպար մը որ փորցաւ և փորձարութեան ենթակայ ըլլալու էր միշտ, չ'ունենալով ոչ ետի ոչ առաջ, Հասս «չուխ» յէ բալթօյ մը հագած էր և լայն սարաւ մը, ասուեսիկ գօտիով պինդ սեղմուած մէջքէն: Բազար խաչըղիի պէս մեծածաւալ կօշիկներ, կրկնակ ներքաններով:

— Բարե՛ւ, մարիկս, ըրաւ բանջարավաճառը խոպոտ ձայնով մը, իր երկու սառած ձեռքերուն մէջ սեղմելով Տանտիկնոջ սաքուկ ձեռքը, որ բացազանչեց:

— Վո՛ւյ, սս ի՛նչ պաղ է ծառխոյ, գնա՛ տաքցիր:

Հալի ունիս, Հօտօի Հանըմ, ըսաւ բանջարավաճառը որ ճիտին քանիցս փաթթած գունաւոր բրդէ շալը հանելով գնաց կրակին երկընցնել ձեռքերը, հիացումի բացազանչութեամբ մը:

— Աս ինչ պատուական կրակ է, պէ՛:

Եւ մինչ իր հոչակ սուր պիտիներուն ծայրը թառած ձիւնը իր կրակ աղբարը տեսնալէն կակուղացած կը հալէր կտթիլ կաթիլ, սենեկին մէջ «օ՛ բարի եկաք, բարի տեսանք» ի անվերջ իրարանցում մըն է սկսաւ. «հոս նստէ՛ք, սանկ հրամմէ՛, սանկ սեխտիլ վրայ նստեցէ՛ք» ի հայկական ու քաղաքավարական կոխ մը որ դէպ աղէկ վերջացաւ: Ալ սապարէզը «է՛ ինչպէս էք աղէկ էք, ինչ կ'ընէք կոր, և՛ աղէկ ըռիճս, փառք Աստուծոյ դուք ինչպէս էք նայինք» ներուեն էր, որոնք խմբովին եկան պարել սենեկին մէջ և այն ատեն կանգ առին երբ վարէն

բժշկական քննութեան մը ենթարկուին Եգիպտական նաւահանգիստներու մէջ և իրենց գոյքերը սպանեցուցին:

ՏՕՔԹԵՕՈՒ ՆԵՎՐՈՒԶ

Իր բնակութիւնը փոխադրած է Շարա-էլ-Մանախ, նորաշէն պահք Սթամբուլի դէմի կարգը, Մեզու Հէլլէր թիւ 28, առաջին յարկ:

Հիւանդ կ'ընդունի ըստ առաջնոյն առաւօտեան ժամը 8-9 և կէս օրէն վերջ ժամը 3 էն 5:

ՊԶՏԻԿ ԴՐԱՄԱԳԼԻՈՎ ԿԱՐԵՒՈՐ ՇԱՀԵՐ

Եւրոպական կարեւոր գործարաններու մէջ ներկարարութիւն սովորած արհեստաւոր մը. որ ամեն գոյնով մետաքս, բուրդ և բամպակ, և ի հարկին կերպասեղէններ կրնայ ներկել, կը փափաքի որ փոքրիկ գրամակուխ մը սենեցող ընկեր մը ունենայ որուն պիտի սորվեցնէ նաև ներկարարութեան արհեստը:

Փափաքողը կրնան դիմել Հայոց Բարեգընկերութեան արճարանը:

ՀԱՅ ԹԵՐԹԵՐ

Փարի նույնի մէջ հետեւեալը կը կարգանք:

ՄԵՐԱՅԻՆՔ — Հաստատագոյն աղբերներէ կիմանանք որ առաջարկութեամբ Պ. Պ. Հալէվի բրօքէսէօր Եթովպերէնի և մեր բարեկամ Անգուան Մէյէի բրօքէսէօր բաղադատական քերականութեան և ձայնագրութեան, Պ. Կարապետ Բասմալեան Խըմբաղի — Տնօրէն «Բանասէր» թերթին, անդամ է ընտրուել Փարիզի Ասիական ընկերութեան:

ԲԱԶՄԱՎԷՊ Ի Մայիս ամսաթիւնն կը տեղեկանանք թէ՛ Կ. Պօլսոյ հայոց Պատրիարքարանի յանձնաժողովին Բազմալեպի Խմբագրութիւնը «Որբունի» թերթի հասոյ-Սոսկալի խառնաշփոթութեան տեսարան

սիրական «չա՛ք չա՛ք» մը ձայն տուաւ յանկարծ:

Դիմաւորումի միեւնոյն ձեւակերպութիւնները և նորէն՝ Սարգիս Աղային՝

— «Լոյսը բռնեցէ՛ք, լո՛յս» ը:

Այս անգամ մուտք գործեցին եազմանի Յուկոնք. բազմաթիւ ընտանիք մը որ մեծով պզտիկով, աղջիկով մանչով վրձին կը զարնէր օրն ի բուն: Զեռքերին կը պատմեն այս քաջագործութիւնները: Կարճահասակ, մանրուկ, սուր անկիւններով, մէկ կողմին ծուած քիչ մը, պզտիկ շարժուն դէմքով, աշխոյժ աչքերով Հասուկ մըն էր եազմանի Յուկոնք. անագին կիւն մը ունէր, գէք, լայնչի. «ժայրերը իրարու կը զպին» կ'ըսեն: Վեց հատ աղջիկ պարզեւած էր այդ կիւնը իրեն. տսոր հոտար՝ շատ յոռետես մարդ մըն էր եազմանի Յուկոնք. միշտ կը կրուէր իր կնկանը հետ, վեց հատ «Մատիա» աշխարհք բերելուն համար:

— Առ տէ՛ «ալպուճուկ» գի՛ր աղջիկներդ կ'ըսէր:

(Շարունակելի) ԳԻՏԱԿ

ԳՈՐԾԱԽՈՐՈՒՀԻ ԿՈՒԶՈՒԿ

Դերձակուհի Տիկին Է. Ա. Այալանեանի Աղբիւրին համար գործաւորուհիներու պէտքերը կայ. փափաքողը կրնան դիմել իրեն բնակարանը ի Պապ-էլ-Լուք Հէլլուանի կայարանին անկիւնը:


թէն 1000 ֆրանկ եւ յլած է, ի նպաստ թրքահայ սրբերու:

— Հարուստ Պագուցի մը, Լաթֆիկ Յարութիւնեան, իր կենդանութեան կը կատարէ կտակն եւ կը յանձնարարէ կտակարաններուն որ մահուանէն վերջը՝ ծախելով իր ստացածները, 10,000 թուրքի նուիրեն Պագուի Ս. Լուսաւորիչ եկեղեցիին, եւ 5000 թուրքի ալ էջմիածնի ճեմարանին. իսկ մնացեալը Պարսկահայոց մէջ արհեստական սուսնարան մը բանալու համար գործածեն:

— Ճրէզնոյի մէջ, կը գրէ Բազմալէպ, բողոքական եւ լուսաւորչական ազգայինք, խեղկատակ առաջնորդներու ձեռքը մատնուած են:

Առաջնորդ կընտրուին Ֆիլէան եւ Ալէքսանդրեան անհատներ. Առաջինը 8000 տուրք հաւաքէր է ժողովարան մը շինելու համար, բայց այժմ այդ պարարտ դուռը հաշիւ է իր բուռն մէջ. երկրորդը ի նպաստ սրբերուն նոյնպէս 8000 տուրք ժողովէր է, բայց որքերը ոչինչ չեն տեսած այլ՝ ստակը իրեն անունին այցի մը գնելու ստուայած է:

— Մխիթարեան երկու հարիրամեայ Յոբէլեանին համար եղած նուիրատուութեանց դումարը, Մայիս ամսաթուոյն մէջ հրատարակուած ցուցակին նայելով 5052, 50 ֆրանկի հասած է:



Հնդկաչինի Տիւր Ռանկուն Թայնս թերթի փետրուար թուոյն մէջ հետեւեալ յայտարարութիւնը կը գտնենք:

ԵԳԻՊՏԱԿԱՆ ՍԻԿԱՐԷԹ


Ճիշտ հիմա ընդունեցանք խիստ մեծ ապստարանք մը՝ այդ վերոյիշեալ Տիար Կարպետ Տէր Աբրահամեանի ֆապրիքայէն, որն որ նայեալ թիչն է ն. Վ. Սըր Ալֆրէտ Միլնըրի G. C. M. G. K. C. B. Բարի կառավարիչ եւ ն. Վ. Հար. Ա. ֆրիկէի բարձր պատուիրակին:

Չափաւոր գին

Տպագրութիւն ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ

ՏՆԻ ՄԻՉՈՒԱ ԼԱՅՑ ԿԵՆԱՑ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏԸ ԵՒ ԿԱՐԵԹԱՐԸ ԵՐԱՇԽԱՌԵԱԼ ԳՐԱՄԱԳԼՈՒԻ 1 ՄԻԼԵԱՐ 563 ՄԻԼՈՆ Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահաբաժինները: Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ի նպաստ իրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼՈՆ որ գրեթէ այլաբար յարկէ սրեւէ ընկերութենէ մէկ միլիար աւելի է: Ս. ԼԷՕՆԱՐ ընդհանուր ներկա. յարցուցիչ ի Գահիրէ ԳՈՐԾԱԿԱԼ Ի ՄՈՒՍՔԻ ԳԵՈՐԳ ԵԿԱՒՕՑ

Ս Ի Ն Կ Ե Ր ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑԻՉ Ե. ՆԱՅՏԼԵՆԿԷՐ Պալաքի փողոց. Խաղէտարի սեփականութիւն, Պրիսթլ Օթէլի ճեղք գիմայ, Գաֆէ Տը Լա Պուրսի կից: ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԲՈՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ 6500 ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ ՈՒՆԷ Այլաբարի ամենէն լաւագոյն կարի մեքենաները ՍԻՆԿԷՐ ներն են եւ ասոնցմէ մինչեւ ցարք 17,000,000 ծախուած է: 400 է աւելի վկայականներով եւ մեքայներով վարձատրուած, Երաշխատեալ մեքենաներ. ԱՄԵՆԷՆ ՄԵՆ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստաներիսին մէջ ստացած է: ՀԱԳԹԱԳԹԻՉ ԲՐՈՒՍԻՈՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԻՔԻՆ ՀԱՅԹԱԳԹԻՉ ԱՆԿՂՈՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԵՒ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԵԱՑ ՀԱՅԹԱԳԹԻՉ Ն. Բ. ԱՅՆՎԱԿԱՆ ՏԱՆ Կեղծերէն զգուշանալ, աշտորութիւն գարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ ՍԻՆԿԷՐ ի յանձնաւորին: ԳԻՆ ՉԱՓԱՌՈՒ Զրի գասեր եւ նորոգութիւններ, ՍԻՆԿԷՐ մեքենայից համար, յաճախորդաց տուններուն մէջ: Վճարմանց Դիւրութիւն Փոխանակութիւններն անքնայից եւ նորոգութիւն ամեն կարգի Մեքենայից



ՀՐԷԻՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՎԱՐՃԱՐԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆԸ ԿԻՐԱԿԻ 5 ՄԱՅԻՍ 1901

2196	5335	4120	1140	210	408
623	1108	1273	1443	1712	1715
1720	1721	2403	3017	3061	4422
4683	4692	6020	6065	6471	6765
7254	7392	7997	8243	8301	8925

ՀՆԵՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ ԿԻՐԱԿԻ 5 ՄԱՅԻՍ 1901

1904	3960	557	1139	3113	5550
8831	7919	4435	408	3031	3989
1594	8626	9571	7036	2314	5256
7537	3730	8776	9991	3556	128
			6791	123	7829

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ «ԱՐՇԱԼՈՅՍԻ» ՀԻՄՆԵԱԼ 1 ՄԱՅԻՍ 1900 ՇԱՐԻԱ ԱՊՏԻԷԼ ԱԶԻԶԻ ՍԿԶԲԸ Օսմանիյի դեղատանին դիւնացի փող տղին մէջ: Ժողովրդական Տպարանին մէջ կը պատրաստուին: Այցեխարտեր, Երջարներադաններ, Գիւրեր, Հրաւիրագրեր, Մանագրներ, Տեղեկագրներ, Կանոնագիրներ, Տոմարներ եւ այլ եւ այլ տպարանի վերաբերեալ յանձնարարութիւններ, կը վաճառուին հետեւեալ դրերին: 1. ԲՆԱՇԽԱՐՀԻԿ ԲԱՌԱՐԱՆ Ի Ա. Ե. Բ. պրակներն: 2. ՈՐԲՈՒՆԻ որոյ թուրքիա մուտքը, ինչպէս կը լսենք, արգելուած է: 3. ՀԱՒԱՔԱՄՈՑ հայոց ժողովրդական երգերու: